



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Ն. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Անահիտ Մարգարյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Անահիտ Մարգարյանը 2012թ. նոյեմբերի 1-ին դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ «...ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածին հակասող»:

Դատական կազմը հիմնվելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրության վրա եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գտնում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պարզաբանությամբ:

Դիմողը, վիճարկելով նշված դրույթի սահմանադրականությունը, չի անդրադարձել այդ իրավադրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, չի ներկայացրել իրավական հիմնավորումներ դրա հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմա-

նադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս առնչությամբ, ՆՏ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-839 որոշման մեջ ձեռնարկել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Մինչդեռ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում: Բացի դրանից, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պարզառահեղուանքային կապի առկայությունը, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհարական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ քաղաքացի Անահիտ Մարգարյանի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապարասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը բարձրացնում է դրա կիրառման իրավազափության հարց: Ղեկավարվելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեռականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավազափության հարց, նման դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դատական կազմը գտնում է, որ այս համարեքստում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Անահիտ Մարգարյանի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



21 նոյեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/1-29